ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<ԷՄԹԻԸՆԴԹԱՖՍ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2010 թվականի օգոստոսին գրությամբ դիմել է ՀՀ վարչապետին՝ հայտնելով իր ցանկությունը ընկերության սեփականությունը հանդիսացող <Կապույտ ալիք> փակ բաժնետիրական ընկերության 100% բաժնետոմսերը, ինչպես նաև այդ պահի դրությամբ դեռ չմարված 2008 թվականի հունիսի 24-ին կնքված NKAPUYT/01/080625 փոխառության պայմանագրով ստանձնած պահանջն ամբողջությամբ անհատույց զիջել Հայաստանի Հանրապետությանը:

Ներկայացված նախագծով առաջարկվում է ընդունել <ԷՄԹԻԸՆԴԹԱՖՍ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետությանը նվիրվող <Կապույտ ալիք> փակ բաժնետիրական ընկերության 100% բաժնետոմսերը՝ բաժնետոմսերի տնօրինման լիազորությունները վերապահելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը, ընկերությանը, ընկերության գույքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առանձնացնել և ամրացնել <ՀՀ նախագահի աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկին, ինչպես նաև ընդունել <ԷՄԹԻԸՆԴԹԱՖՍ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանդեպ <Կապույտ ալիք> փակ բաժնետիրական ընկերության պարտքի պահանջի իրավունքը՝ Հայաստանի Հանրապետությանը փոխանցված պարտքի անվանական արժեքի չափով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը: Նշված գործառույթներն իրականացնելուց հետո առաջարկվում է <Կապույտ ալիք> ՓԲԸ-ն լուծարել:

Նախագծի հետ կապված բանակցությունները վարել է ՀՀ նախագահի աշխատակազմը և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում որոշման նախագծի ՀՀ նախագահի աշխատակազմի առաջարկված տարբերակը:

Նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնի:

Նախագծի ընդունման դեպքում բյուջեի եկամտային և ծախսային մասում էական փոփոխություններ տեղի չեն ունենա:

Նախագիծը մշակվել է հետևյալ իրավական ակտերի հիման վրա՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք
2. <Պետական կառավարչական հիմնարկների մասին> Հայաստանի Հանրապետության օրենք